

ИСТОРИЯ

Բագրատունի վերնախավին ընծայված զգեստների ընդհանուր նկարագիրը

Գրիգորյան Մարիամ Գ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., (Երևան, ՀՀ)
manangrigoryan86@mail.ru

ՀՏԳ՝ 94(479.25):391; EDN: OVVPWI

DOI: 10.58587/18292437-2023.5-28

Հանգուցարաներ՝ Բագրատունյաց Հայաստան, Դվին, Անի, վերնախավ, արքայական հանդերձանք, ընծա, գույն

Общее описание нарядов подаренных Багратидской элите

Григорян Мариам Г.

Институт истории НАН РА, к.и.н. (Ереван, РА)

Аннотация. Одежда в Багратидской Армении, кроме своего жизненного и этического смысла, имела также политическое значение. Она считалась символом власти. Об этом свидетельствуют упоминания о многочисленных примечательных (пышных и дорогих) платьях среди даров, поднесенных Багратидской элите. Что касается значения местных нарядов, то с эстетической точки зрения, они скорее всего отражают предпочтения местной элиты или модные тенденции времени.

Кроме того, исследование одежды Багратидской элиты дает некоторое представление не только о значении, об изготовлении (шитье), о материалах, кройке, цвете, узорах, но также о королевском этикете, о принятых традициях и, самое главное, о развитии определенных ветвей торговли и ремесла.

Ключевые слова: Багратидская Армения, Двин, Ани, элита, королевская одежда, подарок, цвет

A general description of the dresses gifted to the Bagratid elite's

Grigoryan Mariam G.

Institute of History of the NAS of RA PhD in History, (Yerevan, RA)

Abstract. The dressing in Bagratid Armenia besides its vital and elegance meaning had also a political one. It was considered a symbol of reign. The information about numerous noted (fashionable and precious) dresses mentioned among gifts, presented to the Bagratid elite.

As to the meaning of local dressings, from the aesthetical point of view, they more brightly express the elite's taste preferences or tendencies of local fashion.

Besides, the study gives an opportunity to have some understanding not only on the meaning of dressing, its making materials, mode, colour, decorations, but also about the royal etiquette, traditions of the time, and the most important of all, the development of exact branches of trade and crafts.

Keywords: Bagratid Armenia, Dvin, Ani, elite, royal dressing, gift, colour

Նախաբան

Համաձայն միջնադարյան գեղագիտական գաղափարների մեկնության՝ աշխարհը բաժանվում է կենսական և վայելչական ոլորտների:

Կենսական ոլորտի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում նաև հագուստը: Այն՝ իբրև անհրաժեշտություն, համարժեք և համեմատելի էր բնության տարրերից օդին և ջրին, ինչպես նաև կյանքի, ապրելու անհրաժեշտ նախապայմաններ յուսին և հացին [12, էջ 12]:

Սակայն եթե դիտարկենք վայելչության տեսանկյունից, ապա հագուստի գույները, զարդանախշերը և այլ բաղկացուցիչ ստրիբուտներ, իրենց գործուն ազդեցությամբ ներգործելով տեսողության և այլ զգայությունների վրա, կարող են դառնալ նաև վայելչական ոլորտի բաղկացուցիչ մաս:

Հագուստի կենսական նշանակությանը, այն կրելու սահմանված կարգին և առհասարակ զգեստներին վերաբերող մի շարք հարցերի իրավական կարգավորումներ արտահայտված են միջնադարյան կանոնական իրավունքում [8, էջեր 47, 195, 399, 414, 436-437 և այլն] և Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» [18, էջեր 27, 29, 31-32, 37-38, 101, 136-139, 302, 304, 349, 378, 393 և այլն;]¹:

Այդ կանոններում և օրենքներում, որոնք վերաբերում են սոցիալական բոլոր շերտերին, հագուստի կիրառության համար սահմանված են, տարբեր պատճառներով պայմանավորված,

¹ Դատաստանագրքի ՄԻԵ. «Վասն կարգաց եկեղեցոյ եւ տան թագաւորի» գլխում արտացոլված են նաև Բյուզանդական կայսրության արքունի պալատի որոշ դասերի, սպասավորների հագուստին վերաբերող մանրամասներ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս [18, էջեր 394-403]:

որոշ արգելքներ կամ սահմանափակումներ [8, էջ 195; 18, էջ 349]:

Սակայն դրանցից առավել հետաքրքրական է Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» սահմանված հազուստ կրելու կարգը, որում արտահայտված են հազուստի նկատմամբ թագավորի ունեցած իրավասություններն ու արտոնությունները. «*Իշխանք զթագաւորաց մի՛ զգեցցին զգեստ, մինչև նոքա հրամայեացեն եւ կամ տայցեն պատիւս*» [18, էջ 29]: Բացի այդ Մխիթար Գոշը դիպակը², կերպասը³ համարում է. «... *ամենայն արհմակաւ թագաւորին յիցի, եւ ասրեղէն պատուական եւ կտաւ՝ իշխանացն, եւ անարգ ասրեղէն եւ կտաւեղէն՝ զարագն*» [18, էջ 31]:

Բացի այդ միջնադարյան իրավական ընկալումներում հազուստը կանանց օժիտի մաս է կազմել և համարվել է կնոջ սեփականություն [8, էջեր 436-437]:

Կենսական և վայելչական նշանակությունից զատ բարձրաշխարհիկ հասարակության պարագայում, հազուստն ուներ նաև քաղաքական նշանակություն. այն իշխանության խորհրդանիշ էր:

Այս իրողությունն արտահայտվում էր Արաբական խալիֆայության, Բյուզանդական կայսրության և հարևան այլ երկրների առաջնորդների և Բագրատունի վերնախավի միջև հաստատված հարաբերություններում:

Թեպետ, Բագրատունի որոշ արքաներ (Սմբատ I (890-914), Աշոտ II (914-928)) նախընտրում էին հարաբերությունների զարգացումը Բյուզանդական կայսրության հետ, այդուհանդերձ Բագրատունիների համար արտաքին քաղաքականության իրացման պարագայում առավել նախընտրելի էր Արաբական խալիֆայությունը: Հայ-արաբական հարաբերությունների սերտացումը պայմանավորված էր Իսլամականության կողմից Հայոց պետականության և Բագրատունի արքաների իշխանության ճանաչմամբ: Այս կարևոր առաքելությունն իրականացվում էր միջնորդավորված, խալիֆայի անունից՝ Իսլամականության բարձրաստիճան պաշտոնյաների ձեռամբ: Նրանց միջոցով Արաբական խալիֆայությունը թագեր [20, էջեր 139, 146-147, 193, 197-198, 293, 300, 306; 6, էջեր 314-315], արքայական հանդերձանք [20, էջեր 133, 139, 147, 193, 197-198, 252, 300; 6, էջեր 314-315; 22, էջ 277], թանկարժեք զարդերով և տարատեսակ զենքերով զարդարված արագընթաց երիվարներ [20, էջեր 139, 147, 193, 197-198, 252, 293, 300], ինչպես նաև զեղեցիկ ու զանազան այլ ընծաներ էր հանձնում Բագրատունի վերնախավին:

Բոլոր ժամանակներում ընծաների մատուցման բովանդակային նշանակությունը եղել է քաղաքական: Այն իշխանության ճանաչման առիավատյա էր, դիվանագիտական, տնտեսական հարաբերություններ հաստատելու միջոց կամ երաշխիք: Սակայն, որոշ դեպքերում ընծաները դառնում էին այս կամ այն արտաքին ուժի քաղաքական կամքի արտահայտչամիջոց:

Թեպետ, ընծաների զգալի մասը հանձնել է Արաբական խալիֆայությունը, այդուհանդերձ Բագրատունի վերնախավին տարբեր առիթներով ընծաների են արժանացրել նաև Բյուզանդական կայսրերը [20, էջ 285; 22, էջ 277] և հարևան այլ երկրների վերնախավի որոշ ներկայացուցիչներ [20, էջեր 144-145]:

Թեմայի ուսումնասիրությունը բազմաշերտ է:

Կարծում ենք՝ ընծաներից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ: Սակայն սույն հոդվածի շրջանակում կատարած հետազոտությանն իրենց նպաստն են բերել Բագրատունի վերնախավին մատուցած ընծաներից՝ հատկապես զգեստների քննությունը: Քանզի հոդվածի շրջանակում կատարած հետազոտության նպատակն է բացահայտել արքայական վերնախավին ընծայված զգեստների բնորոշ առանձնահատկությունները և թեմային վերաբերող մի շարք այլ հարցեր:

Բագրատունի վերնախավին ընծայված զգեստները

Աշոտ I Բագրատունին (881/883-890 թթ.)⁴ իշխանաց իշխանության շրջանում Արմինիայի կառավարիչ Ալի իբն Յահյա ալ-Արմանիի կողմից «զարդարվել» է բազում զգեստներով և արքունական պատվով [20, էջ 133]: Այսինքն՝ նրա իշխանության ճանաչումն իրականացվել է նաև զգեստներ ընծայելու միջոցով:

Ընծաների հանձնումից հետո Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ բոլորը դաշինք էին կնքում Աշոտ Բագրատունու հետ: Վերջինս զգեստներ ստացել է նաև թագավոր դառնալուց հետո: Դրանք Հայոց արքային հանձնել է Յիսէն [20, էջ 139]՝ Արմինիայի կառավարիչ Իսա իբն ալ-Շայխ ալ-Շայբանին:

Հայոց հաջորդ արքային՝ Սմբատ I Բագրատունուն Իսլամականությունը մի քանի անգամ է զգեստներ ուղարկել: Պատմիչն Ատրպատականի Սաջյան ամիր Մուհամմադ Աֆշինից ստացած զգեստը ներկայացնում է իբրև «... *ոսկիակոտ...*» [20, էջ 147] (ոսկեծույլ-Մ.Գ.), իսկ անձամբ Մուկտաֆի խալիֆայի (902-908 թթ.) կարգադրությամբ ստացածը՝ «... *երևելի զգեստս արքունական...*» [20, էջ 193]: Հովհաննես

² Մետաքսյա ոսկեթել զգեստ կամ մետաքսյա ոսկեթել կամ արծաթաթել թել տե՛ս [14, էջ 521]:

³ Բամբակյա նուրբ մանածոթվածք կամ շերամի որդի բարակ թել տե՛ս [15, էջ 429]:

⁴ Աշոտ I Բագրատունու կառավրման թվագրման մասին առավել մանրամասն տե՛ս [5]:

Դրասխանակերտոցին հաղորդում է Սմբատ I Բագրատունու՝ Յուսուֆ Աբու Սաջից (վերջինս փոխարինել էր Աֆշինին - **Մ.Գ.**) ստացած առավել շքեղ զգեստի մասին՝ այն համարելով «... երևելի զգեստս արքունականս ոսկեճանակու շղաշատեռն հրաշանկարս միանգամայն առաքէ...» [20, էջեր 197-198]: Հայոց արքայի ստացած զգեստները ոսկեհյուս էին, շղարշա: Այսինքն՝ դրանք կարված էին ոսկեթել, թափանցիկ, ցանցավոր նուրբ գործվածքից, իսկ «հրաշանկարս միանգամայն» կապակցությունը վերաբերում է հագուստի կտորի նկարագրությանը: Այն հրաշալի նկարներերով, նախշերով վարպետորեն գործված՝ ասեղնագործ էր: Իսկ Յուսուֆի կողմից արքայի ավագ որդուն՝ Աշոտին, ուղարկված զգեստները ներկայացվում են. «...պերճասպանոյն երանգս զգեստուց...» [20, էջ 198], այսինքն՝ շքեղ, ճոխ երանգներով:

Արաբական խալիֆայությունը մի քանի անգամ զգեստներ է ուղարկել նաև Վասպուրականի Գագիկ Արծրունուն (908-943 թթ.). «...զգեցուցեալ ոսկեզարդ պատմունճան (պատմիչը նկատի ունի Գագիկ Արծրունուն - **Մ.Գ.**) միանգամայն» [6, էջ 314]: Այս հիշատակությունն առանձնակի հետաքրքրական է: Այն եզակի վկայություն է, որում պատմիչը հաղորդում է հագուստի ձևի մասին: Պատմունճանը երկար զարդարված զգեստն էր [17, էջ 69], որը նաև ուներ վերարկուի, խիլայի (պատվո հանդերձ-Մ. Գ.) իմաստ [23, էջ 540]:

Հայտնի է նաև արաբների՝ Գագիկ Արծրունուն. «...հանդերձս զարդուց զարմանալիս...» [6, էջ 315]՝ սքանչելի զարդարանք ունեցող հագուստներ հանձնելու պարագան: Մեկ այլ դեպքում՝ Գագիկ Արծրունուն ընծայած հագուստները համարվել են. «...հանդերձս պատուականս յարքունուստ...» [6, էջ 315], այսինքն՝ արքունիքի կողմից, պատվական, թանկարժեք: Արաբական խալիֆայության կողմից Բագրատունի վերնախավին ուղարկված զգեստների ձևի և հարդարանքի որոշ մանրամասներ հայտնի են դառնում Յուսուֆի կողմից Դավիթ և Գուրգեն Գնունի եղբայրներին մատուցած ընծաների ուսումնասիրության պարագայում: Դրանցից հատկապես հետաքրքրական են ոսկեհյուս բազմաթիվ զգեստները՝ ծիրանիները և լակոնական երևելի բեհեզը [20, էջ 252]:

Չզգեստների ոսկեհյուս նկարագրությունը մի քանի բնորոշում կարող է ունենալ: Այն կարող էր վերաբերել ինչպես հագուստի հումքին՝ գործվածքին, այնպես էլ ոսկեհյուս կարող էր լինել այն թելը, որի միջոցով կարվում էին զգեստները: Չենք բացառում նաև, որ զգեստները զարդարված լինեին ոսկեհյուս ասեղնագործ նախշերով: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ վերնախավին ընծայված հագուստները եթե

ոչ ամբողջությամբ, ապա մասնակի ունեցել են ոսկեթել, ոսկեգույն հարդարանք:

Ինչ վերաբերում է ծիրանիներին [15, էջ 339], ապա դրանք կարմիր գույնով ներկված կտորներ էին կամ դրանցից կարված երկար զգեստներ, որոնք կրելու իրավունք ունեցել են թագավորները կամ առանձին արտոնություններ ստացած իշխանները:

Հարկ է նշել, որ նույն կարգը գործում էր նաև Բյուզանդական կայսրությունում: Մետաքսյա, ոսկով զարդարված ծիրանի զգեստներ կրելու իրավունքը պատկանում էր կայսրությունում արտոնություններ ունեցողների նեղ շրջանակին [28, էջ 136]:

Ինչ վերաբերում է բեհեզին [14, էջ 359], ապա այն վուշի որակյալ թելից պատրաստված բարակ կերպասն է: Միջնադարում Լակոնիայում պատրաստված բեհեզը մեծ համբավ էր վայելում:

Չզգեստների շքեղ և գույնզգույն լինելն արտահայտված է նաև Յուսուֆի կողմից Աշոտ II-ին ուղարկված ընծաներում: Հայոց արքան ստացել է «...զգարդս զգեստուց պատուականս և պայծառս և վայելուչս...» [20, էջ 300]: Թեպետ պատմիչը հստակ չի հաղորդում զգեստի գույնը, այդուհանդերձ «պայծառս և վայելուչս» կապակցությունը հուշում է, որ այն եղել է շքեղ, գույնզգույն և վայելուչ՝ հարմար, գեղեցիկ:

Ստեփանոս Տարոնեցին «...հսանդերձս պայծառս...» [22, էջ 277] (շքեղ, հոյակապ, գույնզգույն - **Մ.Գ.**) է ներկայացնում բյուզանդական կայսեր Վասիլ II-ի (976-1025 թթ.)՝ Կարսի Աբաս Բագրատունի արքային (984-1029 թթ.) մատուցած ընծաներից հագուստները:

Չզգեստների գույների խորհուրդը

Միջնադարյան գեղագիտական ընկալումներում իրերի գեղեցկությունը պայմանավորված էր նրանց գույնով [34, էջ 28]: Չզգեստների գունային նկարագրության մանրամասների համադրման արդյունքում կարելի է փաստել, որ ընծաներում հիշատակված զգեստները հիմնականում եղել են կարմիր, ծիրանի և ոսկեգույն:

Բոլոր ժամանակներում գույներն ունեցել են խորհրդանշական նշանակություն: Գույների ուսումնասիրությունը պետք է իրականացնել միջնադարյան ընկալումներին համապատասխան՝ հաշվի առնելով դրանց նշանակությունն ու խորհուրդը:

Ընծաներում հիշատակված զգեստների գույները նախ և առաջ ունեցել են իշխանության, հասարակության շրջանում բարձր դիրք զբաղեցնելու խորհուրդ: Դրանք իրենց նշանակությամբ և որակական հատկանիշներով, եղել են հագուստներին առավել շքեղ և արքայական նշանակություն հաղորդելու միջոց: Այս հատկանիշներով օժտված է եղել հատկապես կարմիր գույնը: Բոլոր ժամանակներում այն համարվել է

ազնվական, վեհաշուք խորհուրդ ունեցող և առավել պահանջված գույն: Այն գույներից առաջինն էր, որը մարդը սովորեց ոչ միայն ստանալ, այլև՝ տարորշել դրա երանգները [31, էջ 7]: Արքայական իշխանության խորհուրդ ունեին նաև դեղինը և ոսկեգույնը⁵: Դեղինի առավել վառ երանգը, զուգակցվելով փայլուն մետաքսի հետ, հագուստին հաղորդել է ազնվական վերնախավին բնորոշ նրբագեղություն [29, էջ 349]:

Իշխանության խորհուրդ ունենալուց գատ հետաքրքրական է նաև գույների՝ աստվածաբանական վերլուծությունը:

Ըստ Փիլոն Եբրայեցու և Ստեփանոս Սյունեցու՝ հիմնական չորս գույները՝ կարմիրը, ծիրանին, կապույտը և սևը խորհրդանշում են բնության չորս տարրերը՝ ջուրը, հուրը, օդը կամ երկինքը, հողը կամ երկիրը [12, էջ 149, ծան. 3]:

Կարմիր գույնի հետ աղերսված ծիրանին արտահայտում է Քրիստոսի արքայական հանգամանքը [25, էջ 136]: Գրիգոր Տաթևացին այն համարում է առաքինություններից խոհեմության դրսևորման գույն [25, էջ 136, ծան. 558]: Խորհրդանշական բովանդակություն է վերագրվել նաև կապույտ գույնին, իսկ ոսկին համարվել է արքայական արժանապատվության խորհրդապատկեր⁶:

Ինչպես համոզվեցինք, Արաբական խալիֆայության ընծայած զգեստներն ունեին իշխանության խորհուրդ, աչքի էին ընկնում իրենց շքեղությամբ, դրանք կարված էին բոլոր ժամանակների լավագույն կտորներից՝ շղարշից, բեհեզից և այլ թանկարժեք ու նուրբ գործվածքներից: Հագուստները երկար մինչև սրունքները հասնող ծիրանիներ-պատմունաներ էին՝ կարված թանկարժեք թելերով, ամբողջությամբ կամ մասնակի ասեղնագործ նախշերով զարդարված:

Արաբական խալիֆայության մատուցած ընծաները բացի իշխանության ճանաչման խորհրդից, ունեցել են նաև այլ քաղաքական երանգներ: Դրանք եղել են արաբների քաղաքական շահերը բավարարելու միջոց կամ գործիք:

Սակայն այս միտումը չէր նկատվում Հայոց արքաներին ընծաներ հանձնելու դեպքում: Այն հիմնականում արտահայտվում էր Բագրատունի վերնախավի մյուս ներկայացուցիչներին ընծաներ մատուցելու պարագայում: Նմանօրինակ տրամադրություններ էին արտահայտում Վասպուրականի Գագիկ Արծրունուն [6, էջ 314], Գնունի եղբայրներին հանձնված ընծաները [20, էջ 252]: Սակայն, բոլոր դեպքերում էլ ընծաներում հիշատակվող հագուստների հանձնման պարագայում, որևէ միտում կամ տարբերակված

մոտեցում չի ցուցաբերվել: Շքեղ և թանկարժեք զգեստներ ընծայվել են ինչպես արքաներին, այնպես էլ վերնախավի մյուս ներկայացուցիչներին:

Առհասարակ Արաբական խալիֆայությունում հագուստներ ընծայվել են նաև բարձրաստիճան պաշտոնյաներին՝ կարևոր պաշտոններում նշանակվելու կամ զանազան ծառայություններ մատուցելու դեպքում: Դրանցից առանձնացնենք փոխարքաներին ընծայված զգեստները, որոնք նրանք կրել են հանդիսավոր արարողությունների ժամանակ: Այդ հագուստները հիմնականում եղել են թիկնոցներ և դաբիքյան խալաթներ [33, էջեր 67-68]: Հագուստի այս տեսակի՝ դաբիքյան խալաթի կտորն արտադրվում էր Դաբիք քաղաքում [26, էջ 99, որմ. 60], և այն աչքի էր ընկնում իր շքեղությամբ: Արաբական աղբյուրի՝ փոխարքաներին ընծայված զգեստների մանրամասն նկարագրությունը թույլ է տալիս կարծել, որ դրանք որոշ նմանություն կարող էին ունենալ Բագրատունի վերնախավին ընծայած հագուստների հետ: Թիկնոցները կարող էին նման լինել արքունի վերնախավին ընծայված պատմունաներին, իսկ դաբիքյան խալաթը՝ Գագիկ I Բագրատունի արքայի (990-1020 թթ.) հագուստին⁷:

Բագրատունի վերնախավի տեղական զգեստները

Բագրատունի վերնախավին ընծայված զգեստները, որքան էլ շքեղ և թանկարժեք լինեին, չէին կարող ամբողջությամբ արտահայտել նրանց հագուստի բնորոշ առանձնահատկությունները: Բագրատունի վերնախավի՝ հագուստի նկատմամբ ունեցած նախասիրություններն առավել հստակ արտահայտված պետք է լինեին Բագրատունյաց Հայաստանում կարվող կամ պատրաստվող հագուստներում:

Թեպետ հայկական աղբյուրներում վերնախավի տեղական հագուստին վերաբերող մանրամասներ քիչ են պահպանվել, այդուհանդերձ Հայոց արքաների մատուցած ընծաների, նրանց օժման կամ թագադրության մանրամասների, թեմային վերաբերող հնագիտական նյութի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է դառնում վերնախավի տեղական հագուստի մասին ևս որոշ պատկերացում կազմել:

Տեղական զգեստները ոչ միայն արտահայտում են վերնախավի՝ հագուստի նկատմամբ ունեցած նախասիրությունները, այլև հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմել արքունական էթիկետի, ժամանակի ընդունված սովորույթների և ամենակարևորն է՝ արհեստա-

⁵ Դեղին գույնի նշանակության մասին առավել մանրամասն տե՛ս [32, էջ 7]:

⁶ Այս մասին առավել մանրամասն տե՛ս [12, էջեր 13-17; 25, էջեր 134-142]:

⁷ Խոսքը վերաբերում է 1906 թ. Գագիկաշենում հայտնաբերված Գագիկ I Բագրատունու պատկերաքանդակին: Հայոց արքայի հագուստի նկարագրության մասին տե՛ս [30, էջեր 28-29]:

գործության առանձին ճյուղերի զարգացման մասին: Կարծում ենք, Բագրատունի վերնախավի տեղական զգեստները եղել են ըստ նշանակության: Այդ է վկայում Սմբատ I Բագրատունու կողմից Աբխազիայի Կոստանդին III թագավորի (893-929 թթ.) թագադրման և արքայական զգեստների հանձնման (ընծայման) փաստը [20, էջ 202]: Այն թեպետ ուներ քաղաքական բովանդակություն և հաստատում էր Հայոց արքայի ունեցած ազդեցությունը տարածաշրջանում, այդուհանդերձ թույլ է տալիս ենթադրել, որ հագուստն ունեցել է արքայական իշխանության խորհուրդ, նախատեսված է եղել հատուկ արարողության համար՝ ընծայվել է թագադրության ժամանակ: Աղբյուրագիտական նյութը հնարավորություն չի ընձեռում մանրամասն պատկերացում կազմել զգեստների ձևի և այլ լրացուցիչ մանրամասների մասին: Քանզի, պատմիչը իբրև հագուստի բաղկացուցիչ մաս, հաղորդում է միայն զգեստի՝ ակնանկուռ, ոսկյա գոտիով լրացված լինելու մասին [20, էջ 202]:

Սակայն արքայական տեղական զգեստների վերաբերյալ վկայություններն այսքանով չեն սահմանափակվում:

Մուրք Ղազարում պահպանվել է Հայոց արքայի օրհնության մի կարգ: Այն թեև իր ոճով համարվել է առավել ուշ շրջանում հարստացված, այդուհանդերձ բովանդակությամբ և զգեստների նկարագրությամբ, ընդունված է կարծել, որ վերաբերվում է Բագրատունիներին [11, էջ 184]: Դրանում կարդում ենք. «Եւ զգեցուցանեն զթագաւորական հանդերձան. ուրոյն զքղամիդ և զթագն ղնեն ի վերայ սուրբ սեղանոյն» [1, էջ 491]: Օրհնության կարգում նշված քղամիդը թագավորական ծիրանի պատմունճանն է [17, էջ 577]: Քղամիդները տարածված էին նաև կայսերական արքունիքում: [10, էջ 123]:

Սմբատ I Բագրատունու թագադրության ժամանակ ևս Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցին (876-897 թթ.) «... և ածեալ ի գիծս և ի գիրս և ի նկարս տեսականս գոսկեճանուկ զգեցութիւնսն և եղեալ ի գլուխ զթագ թագաւորութեան նորս...» [20, էջ 147]: Ըստ էության՝ Սմբատ I Բագրատունու վերը նկարագրված հագուստը կրկին ծիրանի էր՝ զարդարված (դրոշմված) գրերով և պատկերներով⁸: Հագուստի նկարագրությունը որոշակի ընդհանրություն կարող էր ունենալ Բյուզանդական կայսրությունում տարածված զգեստների հետ: Քանզի կայսրերի զգեստների վրա ևս կային ասեղնագործ պատկերներ և գրեր [28, էջեր 127-136]: Բացի այդ, հագուստի այս տեսակը հիշատակվում է նաև Խալիֆայության մատուցած ընծաներում:

⁸ Այն կարող է ունենալ նաև երփներանգ թելերով գործված կամ գույնզգույն ներկված կտորի, նախշուն գործվածքի իմաստ տե՛ս [21, հ. II, 428]:

Բագրատունյաց արքունիքում վերոհիշյալ զգեստներից զատ հայտնի են եղել նաև սզո խորհուրդ ունեցող հանդերձները:

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունների համաձայն՝ երբ Սմբատ I Բագրատունին հոր մահվանից հետո Երազավորսից տեղափոխվում է Ծիրակավան, նրան այցելում է Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցին. «... ի մխիթարութիւն զնս (պատմիչը նկատի ունի Սմբատ I-ին - Մ.Գ.) համոզեալ մեծի կայսր-դիկոսին՝ դադար վշտացն տայր...» [20, էջ 144]: Այնուհետև Հայոց արքային «... ի ցաւակցաբար վշտակցութիւն» [20, էջ 144] է հայտնում նաև Վրաց Ատրներսեհ կուրապաղատը: Վերջինս Սմբատ Բագրատունու սևաթույր զգեստները փոխարինում է արքայական նոր հանդերձներով [20, էջեր 144-145], այսինքն՝ ճանաչում է նրա իշխանությունը: Դեպքերի նման զարգացումը թույլ է տալիս ենթադրել, որ Հայոց արքայի մահվան ժամանակ թագածառանգը, մինչև իշխանության գալը, համարվել է սզակիր և կրել է սզո խորհուրդ ունեցող հագուստ: Բացի այդ վկայություններում առկա են նաև թագավորական իշխանության փոխանցման վերաբերյալ արարողակարգային բնույթի հիշատակություններ: Դրանք թույլ են տալիս ենթադրել, որ արքայի հանդիսավոր թագադրությունը կամ իշխանության ճանաչումն իրականացվում էր նրան վշտակցություն կամ մխիթարություն հայտնելուց հետո միայն: Այս հանգամանքով պետք է պայմանավորել Գևորգ Բ Գառնեցու և Վրաց կուրապաղատ Ատրներսեհի այցելությունը Սմբատին:

Առհասարակ սզո արարողությունների ժամանակ նախապատվությունը տրվել է առավել զուսպ հանդերձանքին: Այս ավանդույթն առավել վաղ շրջանում տարածված էր նաև պալատական կանանց շրջանում: Նրանք սզո արարողությունների ժամանակ թեթևացնում էին նաև իրենց զարդերը՝ կրելով անզարդ (սնամեջ) ոսկի: Այդուհանդերձ, զարդեր օգտագործելու պարագայում նախապատվությունը տրվում էր դրանք հագուստին հարմարեցնելու եղանակով կրելուն [13, էջ 176]:

Բագրատունի վերնախավի տեղական զգեստները, իրենց ձևով, արժեքով և պատրաստման կատարելությամբ, չէին զիջում ընծաներում հիշատակված զգեստներին:

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունների համաձայն՝ Բագրատունյաց Հայաստանից Յուսուֆին մատուցվող թանկարժեք «ընծաների» թվում եղել են նաև արքունի գանձարաններից վերցված ոսկեհյուս երևելի զգեստներ [20, էջ 210]: Բովանդակային առումով ընծայի հանձնումը Յուսուֆին կարելի է համարել քաղաքական քայլ, որով փորձ է արվել երկիրը զերծ պահել նրա ասպատակություն-

ներից: Սակայն հիշատակության մեջ առավել կարևորում ենք արքունական զգեստների նկարագրությունը և դրանց՝ արքունի գանձարաններում պահված լինելու փաստը: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ զգեստներն այնքան շքեղ և թանկարժեք են եղել, որ պահվել են հատուկ նախատեսված վայրում:

Այս իրողությունը տարածված է եղել դեռևս Արշակունյաց արքունիքում: Հայոց արքաների թագը և հավանաբար հանդերձներն ունեցել են հատուկ պահպանման վայր՝ «տուն պատմունակացն» [24, էջ 387]: Ավելին, Գնթունի իշխանական տոհմը համարվել է Արշակունիների հանդերձապահ, պատմունանակ [11, էջ 13]: Կարելի է ենթադրել, որ այսպիսի մի ապահով վայր պետք է լիներ Բագրատունյաց Հայաստանում արքայական հանդերձների համար նախատեսված գանձարանները: Առհասարակ նման նշանակության կառույցների գոյությունը միջնադարին բնորոշ էր և տարածված:

Բյուզանդական կայսրերը ևս ունեին այսպես կոչված «արքազան» հանդերձարան՝ վեստոսակրա, [10, էջ 129, և էջ 299, ծան. 40] որտեղ պահվում էին նրանց ստացած թանկարժեք ընծաները:

Բագրատունյաց Հայաստանում տարատեսակ շքեղ ու թանկարժեք հագուստների արտադրությունը կամ առկայությունը հաստատվում է նաև այն վկայություններով, որոնք վերաբերում են առավել ուշ շրջանում թշնամու կողմից իբրև ավար երկրից հագուստներ տանելուն:

Երբ մոնղոլական զորքը Չարմադան նոյինի գլխավորությամբ ներխուժում է Անի և կողոպտում է քաղաքը, հրամանատարը չի գոհանում խնջույքներով. պահանջում է նաև ձիեր և թանկարժեք հագուստներ [9, էջ 264]:

Գործվածքներ (կտորներ), մորթիներ և կաշիներ

Բագրատունյաց Հայաստանում արքայական, շքեղ զգեստներ կարելու համար եղել են բոլոր նախադրյալները: Սկսած անհրաժեշտ հումքից մինչև համապատասխան մասնագետներ (արհեստավորներ), ովքեր օժտված են եղել ժամանակի ամենանուրբ և շքեղ գործվածքների, մորթիների և կաշիների հետ աշխատելու հմտություններով:

Տեղական հագուստ կարելու համար հնարավոր էր հումքի ձեռքբերման երկու եղանակ. այն կարող էր արտադրվել տեղում կամ ներմուծվել այլ երկրներից: Բագրատունյաց Հայաստանում առկա էին նպաստավոր պայմաններ ինչպես հումքի արտադրության, այնպես էլ ներմուծման համար:

Տեղական կտորների արտադրությունը ենթադրում էր տարատեսակ թելատու բույսերի մշակում, իսկ բրդյա կտորների արտադրությունն առավել կապված էր անասնապահության

զարգացման հետ: Առհասարակ կտորների արտադրությունը պահանջում էր բարդ և երկարատև աշխատանք: Թելատու բույսերը մշակելուց հետո վերածվում էին թելի, որից հետո միայն հնարավոր էր դառնում ստանալ կտոր: Թելատու կարծում ենք՝ այս մանրամասները կարող են առանձին հետազոտության նյութ դառնալ, այդուհանդերձ տեղին է նշել, որ Դվինից և Անիից հայտնաբերվել են ոսկրից պատրաստված բազմաթիվ իրեր, տափակ առարկաներ, որոնք հավանաբար ձեռագործի կամ բանվածքի (հյուսվածք, գործվածք, ասեղնագործ կտոր, զարդանկար ասեղնագործ) համար են նախատեսված եղել: Այդ գործիքներից են կավից պատրաստված մեծ ու փոքր իլիկների գլուխները, որոնցից մեծերը՝ կիրառել են հաստ, իսկ փոքրերը՝ բարակ թելեր մանելու համար: Դվինում՝ միջնաբերդում, հայտնաբերվել է նաև ոսկրե հերյուն [13, էջ 180]:

Առհասարակ միջնադարյան Հայաստանի քաղաքներից Դվինը կտորների արտադրության կենտրոն էր: Այս հանգամանքը պայմանավորված էր որդան կարմիր ներկի առկայությամբ, որը կտորներին առավել վառ և շքեղ գույն էր հաղորդում: Դվինում հատկապես տարածված էր բրդյա հագուստների, գորգերի, երեսի բարձերի, թամբի կարպետների և այլ ապրանքների արտադրությունը և արտահանումը [19, էջ 656]: Կտորներից հայտնի էր նաև մահուղը [16, էջ 242]՝ բրդյա բավականին հաստ գործվածքը, որից հիմնականում կարում էին վերարկու: Այն ներկում էին որդան կարմիր ներկով:

Սակայն կտորների արտադրությունը միայն Դվին քաղաքով չէր սահմանափակվում:

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին եղել է առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոն, որտեղ արտադրվել և վաճառվել են ինչպես տեղական, այնպես էլ տարբեր երկրներից ներմուծված ապրանքներ: Այդ ապրանքներից աչքի էին ընկնում հատկապես հագուստի համար նախատեսված հումքը, տարատեսակ կտորների արտադրությունը և վաճառքը:

Այս առնչությամբ ուշագրավ վկայություններ են հաղորդում Անիի եկեղեցիների որմերին պահպանված վիմագիր արձանագրությունները: Դրանք վերաբերում են քաղաքում գոյություն ունեցող թաղամասերին կամ փողոցներին, որտեղ եղել են ինչպես գործվածքի արտադրության արհեստագործական հաստատություններ, այնպես էլ՝ կտորների վաճառատեղի կուղղակներ (կրպակներ): Անիում այսպիսի նշանակությամբ հայտնի է եղել Բազրզնոց կամ Բազ փողոցը: «Բազ» բառն արաբերենից թարգմանաբար նշանակում է կտոր [4, էջեր 21-24]:

Անիում կտորի արտադրությանը կամ վաճառքին իրենց նպաստն են բերել նաև կանայք: Նրանցից Մամխատունը՝ Անիի վաճառականներից Խաչերեսի դուստրը, Բագրզնոցում գտնվող իր կրպակը նվիրել է Բագնայրի վանքի Ս. Աստվածածին եկեղեցուն: Թեև արձանագրությունը թվագրվում է 13-րդ դարով՝ 1209-1219 թթ. [3, էջեր 144-145, ծան. 153], այդուհանդերձ ակնհայտ է որ այն պետք է լիներ Բագրատունյաց Հայաստանում տարածված ավանդույթների արտացոլանք:

Ժամանակի հայկական գործվածքներն այնքան թանկարժեք և շքեղ էին, որ դրանցից պատրաստված իրերի համբավը տարածվում էր Հայաստանի սահմաններից դուրս:

Արաբ պատմիչի վկայությունների համաձայն՝ խալիֆան նստում էր հայկական մետաքայա բարձերին, որոնք տարվա չորս եղանակներին զարդարում էին Խալիֆայության պատվական վայրերը [33, էջ 66]: Բոլոր ժամանակներում հայկական ներկերը, գործվածքները, գորգերը, վարագույրները, ծածկոցները, երեսի բարձերը և այլ ապրանքներ իրենց գեղեցկությամբ և պատրաստման վարպետությամբ եղել են հիացմունքի արժանի [19, էջեր 651, 653, 656-657]:

Հագուստի համար որպես հումք ծառայում էր ոչ միայն կտորը, այլև կաշին և մորթին:

Անիի պեղումների ժամանակ հայտնաբերվել էր կաշվե շապիկի փեշի մի մաս՝ զարդարված արծաթյա, ոսկեչրած թելերով արված ձեռագործով, որը կատարված է նուրբ ժապավենի վրա [2, էջ 300]: Կաշվից հագուստի նման նկարագրությունը հնարավոր էր միայն իրականացնել կաշեգործության և դերձակության զարգացման բարձր մակարդակի պարագայում: Քանզի հագուստի հումքը՝ կաշին, պետք է լիներ լավ մշակված, նուրբ և հագուստ կարելու համար հարմար: Կաշվե շապիկի փեշին թանկարժեք թելերով արված ձեռագործն ինքնին փաստում է դերձակի կամ ձեռագործ վարպետի մասնագիտական հմտությունների մասին:

Բագրատունյաց վերնախավում տարածված մորթուց կարված հագուստների վերաբերյալ մանրամասներ է հաղորդում արաբ պատմիչ իբն Ֆակիհը:

Վերջինս վկայում է Հայաստանում եղած գրաստի մասին, որը կատվի նման մի կենդանի էր, ուներ ճկուն հողեր և մագոտ մաշկ: Կենդանու մի քանի կտորն իրար կարելով դառնում էր հագուստ [7, էջ 502]: Բարկեն Առաքելյանը, հենվելով արաբական աղբյուրի վկայությունների վրա, կարծում է, որ հայկական միջավայրում մորթին առավել տարածված է եղել հոգևորականների և ազնվականների շրջանում [2, էջ 301]:

Եվրոպայում ևս մորթին կամ դրանից կարված հագուստը նախատեսված է եղել ազնվական վերնախավի համար: Այս իրողությունն իրավական ամրագրում է ստացել առավել ուշ՝ 13-րդ դարում: Նշված ժամանակաշրջանում Եվրոպայում շքեղ և թանկարժեք համարվել է սպիտակ կգաքիսի (հայկական մուկ-Մ.Գ.) մորթին կամ դրանից կարված հագուստը: Ֆրանսիայում 1294 թ. Ֆիլիպ IV Գեղեցիկի (1285-1314 թթ.) հրամանով նման հագուստ կրելու իրավունքը տրվել է բացառապես ազնվական կանանց [27, էջ 64]:

Այսպիսով, ի մի բերելով վերը նշյալը, կարելի է ենթադրել, որ Բագրատունի արքունի տեղական զգեստները, իրենց արժեքով, շքեղությամբ, պատրաստման կատարելությամբ, չէին զիջում ընծաներում հիշատակվող հագուստներին: Ավելին, տեղական արքայական հագուստը և ընծաներում հիշատակված զգեստներն ունեցել են ընդհանրություններ: Խոսքը վերաբերում է դրանց ձևին, զգեստների պատրաստման (կարելու) հումքին, գույներին և մի շարք այլ բնութագրող հատկանիշներին:

Կարծում ենք՝ զգեստների ընդհանրությունները և նմանություններն առաջին հերթին պետք է պայմանավորել առևտրի, արհեստագործության զարգացմամբ, երկրների, ժողովուրդների տնտեսական և մշակութային շփումներով: Բացի այդ, չենք բացառում, որ ընծաներում հիշատակվող զգեստների վերաբերյալ պատմիչների վկայություններն իրենց վրա կրել են տեղական հագուստին բնորոշ որոշ նկարագրություններ: Կարևոր դերակատարություն կարող էին ունեցած լինել նաև Արաբական խալիֆայության, Բյուզանդական կայսրության, Եվրոպայի և այսրկովկասյան երկրների արքունի վերնախավերում տարածված (արտահայտված) այսպես կոչված միջնադարյան նորաձևության համընդհանուր միտումները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ալիշան Ղևոնդ**, Յուշիկը հայրենեաց Հայոց, հ. Ա: - Վենետիկ: Տպարան Ս. Ղազար, 1869: - 480 էջ:
2. **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. I: - Երևան, Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան, 1958: - 376 էջ+ LXXVI տխտ.:
3. **Բասմաջեան Ա.**, Հայերեն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի եւ Մարմաշինու (Ֆրանսերեն թարգմանութեամբ հանդերձ): - Պարիս, Ֆիլմեն-Դիդոյ եւ ընկերութիւն տպարան: 1931: - 247 էջ:
4. **Գրիգորյան Գ.**, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X-XIV դդ.): - Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 2002: - 134 էջ:

5. **Գրիգորյան Մ.**, Բագրատունյաց թագավորության սկրնավորման թվագրության շուրջ // ԼՀԳ, 2012, № 2-3, էջ 114-125:
6. **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի: - Եր.: Մագաղաթ հրատարակչություն: 2006: - 504 էջ:
7. **Իրն ալ-Ֆակիհ**, Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի: - Եր.: Երևանի համալսարանի տպարան, 2006: - 703 էջ:
8. **Կանոնագիրք Հայոց**, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Ա: - Եր.: ՀՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964: - 740 էջ:
9. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց: - Եր.: Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչության տպարան, 1961: - 426 էջ:
10. **Կոստանդին Ծիրանածին**, Բյուզանդական աղբյուրներ Բ, Կոստանդին Ծիրանածին: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթեկյանի: - Եր.: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: 1970: - 370 էջ:
11. **Հացունի Վ.**, Պատմություն հին հայ տարազին: - Վենետիկ, Տպարան Ս. Ղազար, 1923: - 470 էջ:
12. **Ղազարյան Վ.**, Խորանների մեկնություններ: - Եր.: ՀՀ կառավարությանն առընթեր Հրատարակչության № 2 տպարան, 1995: - 180 էջ:
13. **Ղաֆաղարյան Կ.**, 1952, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 298 էջ:
14. **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հ. I: - Եր.: Պետհրատի տպարան, 1944: - 608 էջ:
15. **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հ. II: - Եր.: Պետհրատի տպարան, 1944: - 512 էջ:
16. **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հ. III: - Եր.: Պետհրատի տպարան, 1944: - 614 էջ:
17. **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հ. IV: - Եր.: Պետհրատի տպարան, 1944: - 645 էջ:
18. **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի: - Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան: 1975: - 642 էջ:
19. **Մուկադդասի**, Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի: - Եր.: Երևանի համալսարանի տպարան, 2005: - 703 էջ:
20. **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ**, Պատմություն Հայոց: - Թիֆլիս, Էլեքտրատպարան Ն. Աղանեանցի, 1912: - 427 էջ:
21. **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիրմելեան, Հայր Մկրտիչ Ալզերեան: - Վենետիկ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 1837: - 1067 էջ:
22. **Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան**, Պատմություն տիեզերական: - Ս. Պետերբուրգ, Ի տպարանի Ի. Ն. Սկորոխտովի, 1885: - 438 էջ:
23. **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան: - Եր.: Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, 1967: - 683 էջ:
24. **Փաւստոս Բուզանդ**, Պատմություն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Ա. (Ե դար): - Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2003: - 1288 էջ:
25. **Քյոսեյան Հ.**, Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանություն: - Եր.: Մատենադարան հրատարակչություն, 2021: - 408 էջ:
26. **Ат-Танухи Абу Али аль-Мухассин**, Занимательные истории и примечательные события из рассказов собеседников, перевод с арабского, предисловие и примечания И. М. Фильштинского. – М.: издательство Наука, 1985. – 304 с.
27. **Захаржевская Р.**, История костюма: От античности до современности. – М.: Издатель Рипол классик, 2005. – 287 с.
28. **Мерцалова М.**, Костюм разных времен и народов, т. I. – М.: изд. Академия моды, 1993. – 542 с.
29. **Месяц С.** Иоганн Вольфганг Гёте и его учение о цвете, (часть первая). – М.: изд. Кругъ, 2012. – 461с.
30. **Орбели И.**, Избранные труды, т. 1. – Ер.: изд. Академии наук Армянской ССР, 1963. – 683 с.
31. **Пастуро М.**, Красный. История цвета, перевод с французского Н. Кулиш. – М.: Новое литературное обозрение, 2019. – 153 с.
32. **Пастуро М.**, Жёлтый. История цвета, перевод с французского Н. Кулиш. – М.: Новое литературное обозрение, 2022. – 151 с.
33. **Хилал Ас-Сабн**, Установления и обычаи двора халифов, перевод с арабского, предисловие и примечания И. Б. Михайловой. Памятники письменности Восток, LXVII. – М.: Издательство Наука, 1983. – 140 с.
34. **Эко У.**, Искусство и красота в Средневековой эстетике, перевод с итальянского А. Шурбелева. – Санкт-Петербург, издательство Алетейя, 2003. – 110 с.

Տճան/Հանձնվել է՝ 19.10.2023
 Բեւեւրիւրուան/Գրախիտուվել է՝ 24.10.2023
 Քրիյաթ/Ընդունվել է՝ 27.10.2023